

Օգոստոսին մէջ ծոմ կը բռնեն՝ Ս. Աստուածածնի համար: Ծաբաթ մը ծոմ կը բռնեն՝ երեք Մողերուն համար: Սուրբ մըն ալ ունին, որ քաջ մըն էր, Սարգիս (Zerlichis) անունով: Ղոր բարձրաձայն օգնութեան կը կանչեն՝ երբ պատերազմի կամ ուրիշ նեղութեան մէջ ըլլան: Զաբաթ մըն ալ անոր համար ծոմ կը բռնեն: Ծառ մը զինուորները եւ ագնուականները անոր համար երեք օր ալ ծոմ կը բռնեն Յունուարի մէջ, այնպէս որ ոչ մէկ բան կ'ուտեն կամ կը խմեն: զօրաւոր օգնական մըն է նեղութեան ժամանակ: Իրենց սուրբերու օրերը Ծաբաթ օրերը կը կատարեն: Զատիկի ձրագալոյցի պատարագը երեկոյեան ժամերգութենէն վերջ կը մատուցանեն, որովհետեւ այն ատեն է որ լոյս կը ծագի երոսաղէմի սուրբ զերեգմանին վրայ: Մեղի հետ կը տօնեն Զատիկը, երրորդութիւնը եւ Համբարձումը, միւս տօները դատ կը կատարեն: Ծնունդը եւ Յայտնութիւնը միեւնոյն օրը կը տօնեն: Եւ նոյն օրը երեկոյեան ժամերգութենէն վերջ՝ պատարագ կը մատուցանեն: Կ'ըսեն թէ Աստուած այն օրը ծնաւ եւ երեսուն տարի վերջ միեւնոյն օրը մկրտուեցաւ: այդ օրը Յունուար վեցն է: Ծաբաթ մը ծոմ կը պահեն տասներկու առաքեալներուն համար, եւ իրենց տօնը մէկ օր միայն կը տօնեն, եւ այն ալ Զաբաթ օր մըն է: «Ողջոյն քեզ» տարին մէկ անգամ միայն կ'ըսեն, այն է Աւետման օրը, զոր մեղի հետ չեն կատարեր:

Երբ երկու ամուսիններ իրարու հետ կուրին, եւ մէկը չուզէ միւսը, իրարմէ կը բաժնուին սեղանակցութենէ եւ անկողնակցութենէ: բայց երբ ոչ մէկը ուզէ միւսը՝ կ'ամուսնալուծուին, այնպէս որ կըրնան ուրիշի հետ ամուսնանալ: Երբ դաւակ ունենան՝ անոնք հօրը կը տրուին:

Իրենց եկեղեցիները բոլորն ալ ազատ են, եւ ոչ ոք կրնայ ժառանգել կամ վաճառել զայն: Երբ քահանայ մը իր զրամով եկեղեցի մը ուզէ շինել, պէտք է ժողովրդապետին տայ, այնպէս որ իր մահէն վերջ՝ ոչ ոք կրնայ կարգադրութիւն

ընել անոր մասին, ապա թէ ոչ՝ թոյլ չեն տար շինելու: նոյնպէս է երբ իշխան մը կամ աշխարհական մը ուզէ հատ մը շինել: այնպէս որ ոչ ոք կրնայ միջամտել, որովհետեւ իրենց սովորութիւնը այսպէս է: Երբ քահանայ մը կամ աշխարհական մը եկեղեցի կը շինէր, իրենց ժառանգները կ'առնէին դայն, ինչպէս ուրիշ կալուածները, եւ վարձու կու տային կամ կը վաճառէին ուրիշ կալուածներու նման: Այս բանը իրենք փոխած են, եւ այլեւս թոյլ չի տրուիր, եւ կ'ըսեն թէ Աստուծոյ բոլոր տունները ազատ պէտք են ըլլալ:

Իրենց քահանաները ամէն զիշեր ժամերգութիւն կ'ընեն, ինչ որ յոյն քահանաները չեն ըներ: Կ'աղօթեն մեռելներուն համար ի շնորհս իրենց թողուցած նուէրին՝ իրենց կենդանութեան ժամանակ: կ'ըսեն թէ լաւագոյն է մարդ ինքնիր ձեռքով վառէ իր մօմը, քան թողու որ ուրիշ մը վառէ: որով ըսել կ'ուզեն թէ ով որ իր կենդանութեան ժամանակ չհոգայ իր հոգին, դժուար է որ յետոյ իր բարեկամները մտածեն իր մասին: Բարեկամները դրամը կ'առնեն եւ պիտի չմտածեն իր հոգին: Կ'ըսեն թէ հոգւոյն համար հոգալը՝ Աստուծոյ հաճելի գործ մըն է: Երբ աղքատ մը առանց խոստովանանքի կամ Գրիստոսի մարմինը ընդունելու մեռնի, զերեգմանատան մէջ տեղ մը կը տրուի անոր իր պաշտպանէն, եւ հոն կը թաղեն զինքը զերեգմանատան մէջ, եւ զերեգմանին վրայ մեծ քար մը կը դնեն, վրան կը դրեն Աստուծոյ եւ մեռածին անունը որ հոն կը հանդէլ, եւ ասիկա կ'ընեն իրր նըշան՝ թէ ան մեռած է: Եւ երբ եպիսկոպոս մը կամ քահանայ մը մեռնի, այնպէս կը զգեստաւորեն՝ ինչպէս որ խորանին առջեւ կը կենայ, եւ քահանաները զերեգմանը կը փորեն, յետոյ եկեղեցիէն դուրս կը տանին եւ զերեգմանին մէջ աթոռի մը վրայ կը բաղմեցնեն: Առաջին օրը մինչեւ զօտին կը թաղեն, եւ ամէն օր կ'երթան զերեգման, եւ վրան կ'երգեն ու սաղմոս կը կարդան, եւ ամէն քահանայ ափ մը հող կը նետէ վրան: ամէն օր այսպէս կ'ը-

նեն, մինչեւ ութերորդ օրը, եւ յետոյ բոլորովին կը թաղեն: Երբ երիտասարդ մը կամ կոյս մը մեռնի, մետաքսներով եւ թաւիչով կը զգեստաւորեն, ականջներուն վրայ ոսկի զինդեր կը կախեն եւ մատներուն վրայ մատանիներ, եւ այնպէս կը թաղեն երիտասարդները որոնք չեն ամուսնացած:

Երբ մէկը աղջկան մը հետ ամուսնանայ՝ որ կոյս պէտք է ըլլայ, եւ զոնէ որ կոյս չէ, ետ կը դարձնէ իր հօր, եւ չ'առնեն՝ մինչեւ որ աւելի օժիտ չտրուի անոր, քան ինչ որ պայմանադրուած էր դաշինքով:

Եկեղեցիին մէջ միայն մէկ խնչ ունին եւ ոչ աւելի, ըսելով թէ մեղք է մեր Տէրը մէկ անգամէն աւելի խաչել եկեղեցիի մը մէջ: Իրենց խորանները պատկերներ չունին, եւ իրենց պատրիարքներն ու եպիսկոպոսները ներողութիւններ չեն շնորհեր, կ'ըսեն թէ ներողութիւնն ու թողութիւնը Աստուծոյ կ'իյնան: Եւ երբ մէկը եկեղեցի մտնէ՝ զղջումով եւ բարեպաշտութեամբ, Աստուած, իր ողորմութեամբ, ներողութիւն ու թողութիւն կը շնորհէ անոր մեղքերուն: Երբ քահանան պատարագը վերջացնէ՝ օրհնութիւն չի տար, այլ կ'ընէ խորանէն եւ մարդիկ ու կիներ առջեւը կու դան եւ ան մէկիկ մէկիկ անոնց զխուն դաշխով կ'ընէ: «Աստուած թողու քու մեղքերդ» (Asswatz thogu thu miechk):

Թիւ պատարագը բարձր ձայնով կը կարդան՝ որ ամէնքը կարենան լսել եւ կ'աղօթեն բոլոր անոնց համար՝ որոնք յանձնած են, եւ ամէն բանի համար որուն համար պէտք է աղօթել: բոլոր քրիստոնէութեան եկեղեցական եւ աշխարհատոնէութեան համար, կ'աղօթեն կան հեղինակութեան համար, կ'աղօթեն հոգեւորական համար, եւ բոլոր անոր Հոռոմի կայսրին համար, եւ իշխաններու, հպատակ թաղաւորներու, իշխաններու, կոմսերու, զինուորներու համար, եւ մինչ իրենք այսպէս կ'աղօթեն՝ ժողովուրդը կը ծնրադրէ եւ ձեռքերը առ Աստուած բարձրացնելով՝ կ'ըսեն «Տէր ողորմես» (Pogornicka): Եւ մինչ քահանան կ'աղօթէ, մարդիկ եւ կիները անդադար կը կրկնեն այս

խօսքերը: Անոնք չ'առ ջերմեռանդ կը կենան եկեղեցւոյ մէջ, եւ բնաւ ասդին անդին չեն նայիր եւ չեն խօսիր, մանաւանդ երբ պատարագի ներկայ են: Իրենց եկեղեցիները չ'առ չեղ կերպով կը զարդարեն եւ զեղեցիկ զգեստներ ունին, թաւիչ եւ մետաքս եւ ամէն զոյնով:

Ոչ մէկ աշխարհական կը յանդգնի Աւետարան կարդալ, ինչպէս մեր ուսեալ աշխարհականները կ'ընեն, որոնք երբ դըքի մը հանդիպին, ամէն բան կը կարդան՝ ինչ որ մէջը գտնեն: ոչ ոք կը համարձակի այսպէս ընել: որովհետեւ ով որ Աւետարան կարդայ՝ Պատրիարքէն կը բանադրուի, որովհետեւ կ'ըսեն թէ ոչ ոք իրաւունք ունի Ս. Գրքը կարդալու, բացի քահանաներէն:

Ամէն Զաբաթ օր կը խնկարկեն իրենց տունները եւ ամէն տօնի նախօրեակներուն, եւ ոչ ոք ուրիշ խունկ ունի բացի ձերմակ խունկէն որ Արարիւ եւ Հնդկաստան կ'ելլէ: Թէ՛ քահանաները եւ թէ՛ աշխարհականները անհաւատներու նման գետին նստած կ'ուտեն:

Իրենց քահանաներուն մէջ չ'առ քարոզիչներ չունին, որովհետեւ ամէնքը քարոզելու հրաման չունին: Իրենց քարոզիչները պէտք է Ս. Գրքին լաւ ծանօթ ըլլան, եւ պէտք է Պատրիարքէն իշխանութիւն ընդունին քարոզելու: Եւ երբ իշխանութիւն ունենան՝ կրնան եպիսկոպոս մ'անգամ պատժել: Իրենց քարոզիչները «վարդապետ» (Varthabiet) կը կոչուին, որ նուիրակի հաւատար է: Եւ մէկէն աւելի են, եւ քաղաքէ քաղաք կը պտրտին՝ քարոզելու համար: Երբ քահանայ մը կամ եպիսկոպոս մը սխալ ընէ, անոր համար կը պատժուի: կ'ըսեն թէ երբ քահանայ մը Աստուծոյ խօսքը սորվեցնէ, բայց չըհատկնայ եւ քարոզէ՝ կը մեղանա:

ԹԵ ԻՆՉՈՒ ՅՈՅՆԵՐԸ ԵՒ ՀԱՅՆԵՐԸ
ԹՇՆԱՄԻ ԵՆ (66)

Յոյները եւ հայերը իրարու միշտ թընամի են ու եւ ձեզի պիտի պատմեմ թէ

